ՀՀ վարչապետի թեկնածու Սերժ Սարգսյանի հայտարարությունները Ազգային ժողովում

2018թ. ապրիլի 17-ին ՀՀ Ազգային Ժողովը հատուկ նիստ էր գումարել՝ ընտրելու Հայաստանի Հանրապետության վարչապետ: Քվեարկությունից առաջ ելույթով հանդես եկավ ՀՀ վարչապետի թեկնածու Սերժ Սարգսյանը: Ելույթին հետևեց հարցուպատասխան: Պատգամավորներից երկուսը՝ Սամվել Նիկոյանը և Կարեն Բեքարյանը, վարչապետի թեկնածու Սերժ Սարգսյանին ուղղեցին Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը վերաբերող հարցեր, որոնց հետևեց Սերժ Սարգսյանի արձագանքը՝ գնահատականներով:

Ստորև՝ պատգամավորների հարցերը և Սերժ Սարգսյանի արձագանքը:

Պատգամավոր Սամվել Նիկոյան՝ հարց. «Հարգելի պարոն Սարգսյան, իմ կարծիքով մեր երկրի առջև ծառացած մարտահրավերներից ամենակարևորները հետևյալ հարցերն են. Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի անվտանգությունը, սոցիալ-տնտեսական իրավիճակը, այսինքն՝ սոցիալական խնդիրները և արտագաղթը: Եվ անկեղծ ասած Ձեր ելույթում Դուք այդ կետերին անդրադարձաք և կարևորեցիք: Այդ իսկ պատճառով իմ հարցը վերաբերում է ազգային անվտանգությանը և մասնավորապես այն հանգամանքին, որ Ադրբեջանը վերջին տասնամյակում միլիարդավոր նավթադոլլարներ է տրամադրել իր բանակի սպառազինությանը և առիթը բաց չի թողնում հոխորտալու և Լեռնային Ղարաբաղի հարցը ռազմական ճանապարհով լուծելու: Եվ անկեղծ ասած իր սպառնալիքը իմ կարծիքով ապրիլյան պատերազմը հենց այդ նպատակով ինքը սանձազերծեց և իր առջև դրել էր մեծ խնդիրներ: Այժմ իմ հարցը. ըստ Ձեզ, պարոն Սարգսյան, իր պլանավորածի ո՞ր մասով Ադրբեջանը և ի՞նչ խնդիրներ կարողացավ լուծել: Եվ երկրորդը և ամենակարևորը՝ ի՞նչ եզրահանգումներ և քայլեր կատարեց Հայաստանի

Հանրապետությունը, մեր կառավարությունը և ժողովրդի լեզվով ասած՝ ո՞րն է ապրիլյան պատերազմի դասերը և ինչքանո՞վ ենք մենք դա կարողացել լուծել»:

ՀՀ վարչապետի թեկնածու Սերժ Սարգսյանի պատասխանը. «Նախ, պետք է ասեմ, որ ապրիլյան պատերազմը և՛ անակնկալ էր, և՛ անակնկալ չէր: Այն առումով, որ շատ դեպքերում մարդիկ գրեթե համոզված են լինում ինչ-որ բանում, բայց ներսում հույս են փայփայում, որ հակառակորդը կամ գործընկերը կղեկավարվի առողջ տրամաբանությամբ և չի գնա քայլերի, որոնք վնասակար են երկու կողմի համար էլ:

Այս առումով մենք դաս առաջին պետք է համարենք այն, որ այլևս գոնե շատ տևական ժամանակ երբեք մենք չպետք է հույս փայփայենք, որ Ադրբեջանի ղեկավարությունը թողնելու է իր ուխտադրուժ մոտեցումները, թողնելու է իր ցանկությունը՝ ուժով լուծելու Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը: Թե ինչքան հաջողվեց Ադրբեջանի ղեկավարությանը իրականացնել իր ծրագրերը, կարծում եմ այսօրվա շփման գծի պատկերը խոսում է այն մասին, որ իհարկե՝ ոչ:

Հաջորդ դասն այն է, որ մենք շատ երկար ժամանակ պետք է ամենամեծ ուշադրությունը դարձնենք մեր զինված ուժերի բարեփոխմանը, նոր սպառազինությունների ձեռքբերմանը, սեփական սպառազիններ արտադրելուն և որ ամենակարևորն է՝ հայկական զինվորի ու սպայի ոգին միշտ բարձր պահելու, առօրյայում նրա կենցաղային խնդիրները լուծելու և ապագայի նկատմամբ որևէ իրադարձության պայմաններում նրանց վստահությունը ամրապնդելուն»:

Պատգամավոր Կարեն Բեքարյանի հարցը. «Հարգելի պարոն Սարգսյան, արցախյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացը կարծես լավատեսության տեղ այս պահի դրությամբ չի տալիս: Բոլորիս համար հստակ է նաև,

որ դա պայմանավորված է Ադրբեջանի ղեկավարության ոչ կառուցողաան մոտեցումներով և կեցվածքով: Այս պարագայում ինչպե՞ս եք պատկերացնում խաղաղ բանակցությունների ապագան և այս իրավիճակում ինչ նոր քայլեր եք պատրաստվում ձեռնարկել և ինչ քայլեր են հնարավոր Ադրբեջանի ղեկավարությանը բանակցային առավել կառուցողական հուն վերադարձնելու համար: Շնորհակալություն»:

ՀՀ վարչապետի թեկնածու Սերժ Սարգսյանի պատասխանը. «Իրոք, բանակցային գործընթացը լավատեսություն չի ներշնչում, բայց ավելի հստակ ասել, որ այդ բանակցային գործընթացը ուղղակի կանգնած է: Կանգնած է, որովհետև բանակցությունների արդյունքից Ադրբեջանի ղեկավարության ակնկալիքները անիրատեսական են, անընդունելի մեզ համար: Պետք է ասեմ, որ մինչ այս փուլը մենք բոլոր հնարավոր միջոցները ձեռնարկել ենք, որպեսզի իրոք բանակցային պրոցեսում աշխուժություն տիրի, որպեսզի բանակցային պրոցեսում ձեռք բերված պայմանավորվածությունները որոշակի կայունություն ունենան և հիմք հանդիսանան բանակցությունները հաջողությամբ ավարտելու համար: Բայց ցավոք սրտի ոչ միայն կոնկրետ Լեռնային Ղարաբաղի խնդրի շուրջ գոյություն ունեցող փաստաթղթի շուրջ բանակցություններում, այլ նաև վստահության որոշակի միջոցներ ստեղծելու, հրադադարի ռեժիմը պահպանելու և այլ հարցերով մեր հանդիպումները և բանակցությունները ընդհանրապես որոշ ժամանակ հետո պարզվում են, որ անտեղի են, որովհետև մեր գործընկերները պայմանավորվածությունները չեն պահում:

Մեկ անգամ ևս հստակորեն ես հայտարարում եմ, Հայաստանի Հանրապետությունը՝ հիմքում ունենալով Լեռնային Ղարաբաղի, Արցախի Հանրապետության նախագահի, ղեկավարության պնդումները ասելու, որ մենք պատրաստ ենք և մեր ցանկությունն է խաղաղ ճանապարհով լուծել խնդիրը: Եվ այդ խնդիրը կարող է լուծվել, բանակցային պրոցեսը կարող է ակտիվանալ, եթե Ադրբեջանի ղեկավարությունը դեն գցի իր այն սին պատկերացումները, որ փոխզիջումները նշանակում է միայն զիջումներ Լեռնային Ղարաբաղի կողմից կամ Հայաստանի Հանրապետության կողմից: Այդպես լինել չի

կարող: Իսկ ապագան ցույց կտա, թե ինչ լրացուցիչ քայլեր մենք կարող ենք ձեռնարկել, որպեսզի մեզ համար ամենակարևորագույն խնդիրներից մեկը ստանա արդյունավետ ընթացք»: